ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1459-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՍԱՀԱԿ ԱԲՐՈՅԱՆԻՆ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 2.1-4) ԻՐ ՊԱՇՏՈՆԸ ՄԵԿ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Սահակ Աբրոյանի դիմումը, ինչպես նաև նկատի ունենալով, որ 2026 թվականի հունվարի 1-ին լրանում է նրա 65 տարին՝ ***որոշում եմ.***

1. Հայաաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի զարգացման, ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Սահակ Աբրոյանին (ծածկագիր՝ 2.1-4) թույլատրել շարունակել զբաղեցնել իր պաշտոնը մեկ տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի հուվարի 1-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1460-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ ԿՈԼՅԱ ԱՎԵՏԻՔԻ ՄԱՀԼԱՄՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 25-Լ որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված առաջին խմբի հաշմանդամություն ունեցող քաղաքացի Կոլյա Ավետիքի Մահլամյանին անվասայլակ ձեռք բերելու համար տրամադրել դրամական հատուցում 190000 (հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ հետագայում ներկայացնելով ծառայության ձեռքբերման անդորրագիրը:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 29

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1461-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱԻՐԻ ԳՐԻԳՈՐԻ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 25-Լ որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացի Նաիրի Գրիգորի Տեր-Գևորգյանին դեղորայք ձեռք բերելու համար տրամադրել դրամական հատուցում 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ հետագայում ներկայացնելով ծառայության ձեռքբերման անդորրագիրը:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1462-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-085-0581-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 05-085-0581-0001 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, Կ. Շահինյան փողոց, թիվ 2/2 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 29
ք. Մարտունի